ՍՈՒՐԵՆ ՀՈԲՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՁԻԹ-ՀԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

(XIXդ. - XXդ. առաջին կես)

(Պատմազգագրական ուսումնասիրություն)

Խմբագիր՝ Գ.Գ. Սարգսյան

Ընկերոջս՝ ազգագրագետ
ՋԱՎԵՆ ԽԱՌԱՏՅԱՆԻ հիշատակին

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրությունը վերաբերում է հայ ժողովրդի տնտեսական գործունեության ավանդական ճյուղերից մեկին՝ ձիթհանությանը: Ազգագրորեն այս բնագավառը չի հետազոտվել: Լկսած 20-րդ դարի երեսնական թվականներից, տնտեսության այս ճյուղը գանազան պատճառներով սկսեց անկում ապրել և արդեն հիսնական թվականներին գրեթե վերացավ: Հարցի համակողմանի ուսումնասիրությունն արդեն 1960-ական թվականներին անհրաժեշտ և պարտադիր էր այն առումով, որ դեռևս հնարավոր էր դաշտային ազգագրական նյութեր հավաքել մարդկանցից, որոնք հանդիսանում էին ձիթհանության ավանդական եղանակների և հմտությունների կրողներ: Սույն աշխատության հրապարակումը մի փորձ է մոռացությունից փրկելու հայոց տնական փորձի ու հմտության արդյունքում ձևավորված տնտեսական զբաղմունքի և նյութական մշակույթի մի ասպարեզ ևս:

Աշխատանքի նպատակն է ցույց տալ ձիթհանության տեղն ու նշանակությունը հայոց տնտեսական կենցաղի համակարգում: Դաշտային ազգագրական նյութերի և մատենագիր ու վրմագիր սկզբնաղբյուրների պարունակած տեղեկությունների հիման վրա ներկայացվում են հայոց երկրագործական մշակույթի համակարգում ձիթատու բույսերի աեսականին, դրանց մշակման, խնամքի, բերքահավաքի և վերամշակման հետ կապված ժողովրդական գործառույթները:

Աշխատանքի կարևոր խնդիրներից են ձիթհանության տեխնոլոգիական գործընթացների, ձիթատու բուսահատիկների վերամշակման արտադրական կառույցների՝ ձիթհանների, առանձին մշակաբույսերի տարածման վայրերի, ձիթհանների կառուցման և գործարկման ձևերի և առանձնահատկությունների քննությունն ու լուսաբանումը: Մեծ ուշադրություն է դարձված ձիթհանության հետ առնչվող տասնյակ տարաբնույթ բառեզրերի ստուգաբանությանը: Տարբեր աղբյուրներից հավաքվել, համադրվել և քննության են ենթարկվել ձիթհանության ասպարեզում հայերենի տարբեր բարբառներում բուսանունների, ձիթհանի, դրա առանձին արտադրամասերի ու գործընթացների, հարմարանքների ու գործիքների, չափերի ու կշիռների անվանումները, որոնց մեծ մասն արդեն մոռացվել է:

Նեբկա ուսումնասիրությունն աշխարհագրորեն ընդգրկում է Արևելյան Հայաստանի տարածքը՝ ազգագրորեն մատչելի ժամանակահատվածում (19-րդ դ. երկրորդ – 20-րդ դ. առաջին կեսեր): Հետազոտության մեջ օգտագործվել են նաև պատմական Հայաստանի այլևայլ գավառների և հայ գաղթօջախներին վերաբերող նյութեր:

Չնայած Հայկական լեռնաշխարհը համարվում է երկրագործական մշակույթի բնօրաններից մեկը, այս ասպարեզում կատարված ազգագրական ուսումնասիրությունները տնտեսության բնագավառների մասին տակավին լիակատար չեն: Դժբախտաբար այդ բացը գնալով դժվարանում է լրացնել, քանի որ նյութական մշակույթի ավանդական շատ ճյուղեր, հասկանալի պատճառներով դուրս մղվելով կենցաղից, աստիճանարար մոռացվում են:

Հազարամյակներ շարունակ հայ ժողովրդի անտեսական կենցաղում ուրույն և կարևոր տեղ է ունեցել նաև ձիթատու բույսերի մշակումը, դրանց հատիկներից զանազան եղանակներով ձեթի ստացումը:

Այս կամ այն բույսը մշակութենացնելու անհրաժեշտ գործոնները եղել են տվյալ վայրում սառցադաշտերի բացակայությունը կամ դրանց փոքր ազդեցությունը, կլիմայական բարենպաստ պայմանները, հարուստ բնաշ-

խարիզ, որն ընտրության լայն հնարավորություն է տվել և այնպիսի վայրի կենդանիների առկայությունը, որոնց հնարավոր էր ընտելացնել: Այս ամենը հանգեցրել է այն եզրակացության, թե բույսերի մի զգալի մասը մշակութենացվել է Առաջավոր Ասիայում և Անդրկովկասում:[1]

Եվրասիայում երկրագործական մշակույթի առաջացման չորս ինքնուրույն օջախ է դիտարկվում, որոնցից մեկը առաջավորասիականն է, որտեղ էլ, հենց այն խթանել է Շումերի, Լկաղի և Ուրարտուի նման հզոր պետությունների կազմավորմանը:[2]

Աշխատանքի հիմնական սկզբնաղբյուրը ազգագրական նյութն է, հատկապես այն, որ հեղինակը երկու տասնամյակի ընթացքում հավաքել է Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերում և հարևան երկրների հայաբնակ վայրերում: Սկսած 1971թ. հեղինակը ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ազգագրության բաժնի և Երևանի պետական համալսարանի ազգագրության ամբիոնի գիտարշավների կազմում ու անհատական ուղևորությունների ձևով դաշտային ազգագրական նյութեր (այսու՝ ԴԱՆ) է հավաքել Այունիքում՝ 1972թ. Գեղարքունիքում՝ 1973թ., Լոռիում՝ 1974-1976թթ., Շիրակում՝ 1977թ., Արցախում՝ 1979-1990 թթ.՝ Տավուշում, Զավախքում, Ուտիքում, Կոտայքում, Վայոց ձորում, Արագածոտնում և այլուր: Նյութերը գրառվել են ձիթհանության բնագավառում աշխատած տասնյակ մարդկանցից: Հեղինակը շնորհակալությամբ է հիշում նրանց բոլորին:

Հարկ է նշել, որ 1960-ական թվականներին Հայաստանի տարածքում ոչ մի ավանդական ձիթհան չէր գործում և դրանց գործարկման եղանակները հիմնականում գրառվել են բանասացներից: Գիտարշավների ընթացքում արվել են նաև չափագրություններ ու լուսանկարներ: Հիմնական նյութը գրանցվել է ձիթհանության ավանդաբար զարգացած շրջաններում՝ Շիրակ, Գեղարքունիք, Այունիք:

Ուսումնասիրության համաբ իիստ շահեկան է եղել 19-րդ դարում և 20-րդ դարի առաջին կեսերին բազմաբնույթ գրքերում, պարբերական հրատարակություններում և մատենաշարերում հրատարակված բուն ազգագրական նյութը: Դրանցից սույն աշխատանքի համար անփոխարինելի սկզբնաղբյուր են հանդիսանում «Ազգագրական հանդեսը» (այսու՝ ԱՀ) և «Էմինյան ազգագրական ժողովածուն» (այսու՝ ԷԱժ): Ձիթատու բույսերի մշակման, ձիթհանության և ձիթամթերքների կիրառման մասին ուշագրավ նյութեր ենք քաղել հայ ազգագրական գրականությունից:[3]

Խնդրո առարկայի վերաբերյալ արժեքավոր նյութ է ամբարված «Բազմավեպ», «Մշակ», «Փորձ», «Նոր-Դար» և այլ պարբերականներում: Դրանք հիմնականում պատմամշակութային ընդհանրացումներ անելու միտում չունեն, այլ անդրադառնում են սոցիալ- տնտեսական խնդիրների:

1960-ական թվականներին ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը սկսեց հրատարակել «Հայ ազգագրություն և բանահյուսություն» (այսու՝ ՀԱԲ), մատենաշարը: Այստեղ տպագրված հայոց նյութական և հոգևոր մշակույթին նվիրված աշխատություններում ուշագրավ նյութեր կան նաև ձիթհանության վերաբերյալ: Համանման նյութեր ենք քաղել ինստիտուտի ազգագրության և բանահյուսության բաժինների ու Հայաստանի պետական պատմական արխիվներից: Հույժ օգտակար են եղել 19-20-րդ դարերում հրատարակված ռուսալեզու վիճակագրական, տեղագրական և այլ բնույթի պաշտոնական հրատարակությունները, որոնք հարուստ նյութեր են պարունակում Անդրկովկասի ժողովուրդների նյութական և հոգևոր մշակույթի վերաբերյալ:

Տնտեսությունը և մասնավորապես՝ գյուղատնտեսությունը ավանդաբար առավել զարգացած էր Արարատյան դաշտում, որը նշում է նաև Ղազար Փարպեցին. «Զգաւառն Այրարատու, զհոյակապն, և զհռչակաւորն և զականաւորն, զամենաբոյսն, զամենալին, զամենագիւտն, ի շահս և ի դարմանս մարդկային պիտոյիցս կենաց և վայելչութեան և սքափութեան...զանպակասութիւն հացի և գինւոյ, զանուշահոտ, զմեղրամոմ քաղցրութիւն բանջարանացն և զզանազանումն իւղաբուղխ սեր-

[1] *П.М. Жуковский*, Культурные растения и их сородичи,Л.,1964,с. 18:

[2] *А.И. Купцов*, Элементы общей селекции растений, Новосибирск, 1971, с. 73:

[3] *Ստ. Լիսիցյան*, Զանգեզուրի հայերը, Եր. 1969, *Վ.Հ. Բրոյան*, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Եր., 1972:

մացն..»:[4]

20-րդ դարի 30-ական թվականներին զանազան պատճառներով Արարատյան դաշտում վերացան քնջութի հատիկներ վերամշակող ձիթհանները: Դրանց մասին մեզ հայտնի միակ հավաստի աղբյուրը Վ. Սադոյանի «Երևանի ազգագրությունը» ձեռագիր աշխատությունն էր: Հետագայում ռուսական պաշտոնական տեղեկատուներից մեկում ծանոթացանք Ա. Մունչաձեի հոդվածին, որտեղ նկարագրվում է քնջութ վերամշակող ձիթհանը և ձեթի արտադրությունը Երևանի նահանգում:[5] Այն հատկապես շահեկան է նրանով, որ գալիս է հաստատելու 1979 թ. Արմավիրի մարզի Նալբանդյան և Արմավիր գյուղերում հեղինակի հավաքած դաշտային նյութի հավաստիությունը:

Ձիթաբույսերի և դրանց մշակության հետ կապված արժեքավոր տեղեկություններ ենք քաղել Հ. Աթանասյանցի «Երևանի նահանգի բուսականութիւնը», Ղ. Ալիշանի «Հայբուսակ կամ հայկական բուսաբառութիւն» և Կ. Գաբիկյանի «Հայկական բուսաշխարհ» աշխատություններից: Ձիթատու հատիկների, դրանց վերամշակման, զանազան հարմարանքների ու համապատասխան արտադրական կառուցվածքների հետ կապված բազմաթիվ բառեզրեր ենք քաղել և ճշտել «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Հր. Աճառյանի «Հայերեն արմատական բառարան» և «Հայերէն գաւառական բառարան», Ա. Ամատունու «Հայոց բառ ու բան», Ատ. Մալիտասյանցի «Հայերեն բացատրական բառարան» և այլ աշխատություններից:

Դաշտային աշխատանքների հենց սկզբում պարզ դարձավ, որ սահմանափակվելով միայն 19-րդ դարի վերջով և 20-րդ դարի սկզբով, ուսումնասիրությունից դուրս էր մնում Հայաստանի միջնադարյան բարձր զարգացման հասած ձիթհանության մշակույթը: Հայկական գրեթե բոլոր վանքերն ունեցել են սեփական, եղբեմն՝ մի քանի ձիթհան, որոնց միջոցով հոգացել են վանականների սննդի, շենքերի լուսավորման և հոգևոր սպասարկման կարիքները: Այս պարագայում անհրաժեշտություն առաջացավ ուսումնասիրելու վիմագրական բնույթի բազմաթիվ սկզբնաղբյուրներ, որոնք ուշագրավ տեղեկություններ են պարունակում ձեթի և ձիթհանների մասին: Դրանցից հարկավոր է նշել հատկապես «Դիվան հայ վիմագրության» մատենաշարը: Ձիթհանության ուսումնասիրության համար արժեքավոր նյութեր ենք քաղել ճարտարապետներ Հ. Խ. Խալփահչյանի, Վ.Մ. Հարությունյանի և հնագետ Բ.Ն. Առաքելյանի՝ միջնադարյան տնտեսությանը և հայկական ճարտարապետական հուշարձաններին նվիրված մի շարք աշխատություններից:

---

[4] *Ղազարայ Փարպեցւոյ*, Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան, Թիֆլիս, 1907, էջ 19-20:

[5] *И.И.Шопен*, Исторический памятник состояния Армянской области в эпоху ее присоединения к Российской империи, СПб, 1852, Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, Тифлис, 1884-1886 (այսուհետև՝ *МИЭБГКЗК*), Сборник материалов для описания местностей и племен Кавказа, Тифлис, 1881-1929, (այսուհետև՝ *СМОМПК*), Сборник статистических сведений о Кавказе, Тифлис, 1869-1880, (այսուհետև՝ *СССК*), Памятная книжка Эриванской губернии, Эривань, 1892-1906 (այսուհետև՝ *ПЭКГ*) .